ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 02.03.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի
թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/22

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ) քննելով Ա/Ձ Գոռ Աբրահամյանի 13.02.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **Ա/Ձ Գոռ Աբրահամյանի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

Ա/Ձ Գոռ Աբրահամյանը (այսուհետ՝ նաև Ա/Ձ) 13.02.2018թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Ոչ պատշաճ տեղեկացված լինելու պատճառով խախտվել է իմ որակավորման փաստաթղթերը ժամանակին ներկայացնելու պարտավորությունը: Մասնավորապես Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 43-րդ կետը և էլեկտրոնային ձևով գնումների կատարման կարգ հաստատելու մասին ՀՀ կառավարության 6 ապրիլի 2017 թվականի N 386-Ն որոշման 16 –րդ կետը:

Հայտնում եմ, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ընթացակարգը չեղյալ է հայտարարվել որակավորման փաստաթղթերի պահանջը ստանալուց երեք աշխատանքային օրվա ընթացքում փաստաթղթերը չներկայացելու պատճառով: Ստորև ներկայացնում եմ որակավորման փաստաթղթերը ժամանակին չներկայացնելու պատճառը:

Մրցույթին մասնակցելուց և միակ մասնակից լինելուց հետո, ես յուրաքանչյուր օր ստուգել եմ իմ էլ. փոստը, ժամանակին և պատշաճ ձևով սպասվելիք բոլոր ավտոմատ և ոչ ավտոմատ ծանուցումները ուսումնասիրելու և պատասխանելու համար: Որոշ ժամանակ հետո ստացել եմ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ոչ ավտոմատ ծանուցում այն մասին, որ ես ժամանակին չեմ ներկայացրել որակավորման փաստաթղթերը: Մանրամասնորեն մեկ անգամ ևս էլ. փոստը ուսումնասիրելուց հետո պարզել եմ, որ որակավորման փաստաթղթերի ներկայացումը պահանջող ոչ ավտոմատ ծանուցումը գտնվում է էլ. փոստի «սպամ» թղթապանակում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ խորհուրդ չի տրվում «սպամ» թղթապանակի պարունակությունը բացել և ուսումնասիրել, ես երբևիցե չեմ հետևել «սպամ» թղթապանակին: Ոչ ավտոմատ ծանուցումը «սպամ» թղթապանակում ստանալն էլ հանդիսացել է միակ պատճառը, որ ես ժամանակին չեմ տեղեկացել որակավորման փաստաթղթերի ներկայացնելու մասին ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ուղարկված ոչ ավտոմատ ծանուցմանը:

Հայտնում եմ նաև, որ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/7 ծածկագրով հայտարարված մրցույթին վերաբերվող բոլոր ծանուցումները ստացել եմ էլ. փոստի նամակների ստացման հիմնական թղթապանակում, բացի որակավորման փաստաթղթերը պահանջող ոչ ավտոմատ ծանուցումից, որը գտնվում է «սպամ» թղթապանակում:

Ընկերությունը Խորհրդին ներկայացված բողոքով խնդրել է.

Չեղյալ համարել ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/7 ծածկագրով՝ 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ չափաբաժինների մասով ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումը:

Խորհրդի նիստին մասնակցում էր Ա/Ձ Գոռ Աբրահամյանը:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով՝ Խորհուրդը դիմել է ՀՀ պաշտպանության նախարարությանը բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու նպատակով, նույն հոդվածով սահմանված ժամկետում Խորհրդին տրամադրել գրավոր դիրքորոշում, սակայն վերջինիս կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

ՀՀ պաշտպանության նախարարությունը պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

3. **<u>ԳԲԽ-ԷՍ-2018/22 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>**

Խորհուրդն ուսումնասիրել է Ա/Ձ Գոռ Աբրահամյանի 09.02.2018թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/7 ծածկագրով գնանշման հարցման հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/7 ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 12.01.2018թ. ժամը 10:30-ին կայացած նիստի թիվ 3 և 29.01.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրությունները:

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար՝ «համեմունքներ, թեյ, սխտոր» ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/7 ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ՝ նաև ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Գոռ Աբրահամյանը:

Հանձնաժողովը 12.01.2018թ. ժամը 10:30-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության՝ 4.1-րդ կետով որոշել է, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ չափաբաժինների մասով ընթացակարգի առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել Ա/Ձ Գոռ Աբրահամյանին:

Հանձնաժողովը 29.01.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետով արձանագրել է, որ Ա/Ձ Գոռ Աբրահամյանի որակավորման չափանիշներին համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը գնումները համակարգողի էլ. փոստին չի ուղարկվել, ուստի գնահատող հանձնաժողովը որոշել է մերժել վերջինիս կողմից ներկայացված հայտը:

Խորհրդում տեղի ունեցած նիստի ժամանակ Գոռ Աբրահամյան Ա/Ձ-ն Խորհրդին հայտնեց, որ բացի այն, որ ավտոմատ ծանուցումը հայտնվել է «սպամ» թղթապանակում, այնուամենայնիվ նշված ծանուցման վերնագիրը չի պարունակել որակավորումը հիմնավորող փաստաթղթեր ներկայացնելու վերաբերյալ որևէ նշում: Ավելին, խնդրո առարկա հանդիսացող ծանուցման միջնամասում նշված են եղել «խնդրում ենք չպատասխանել այս նամակին» բառերը

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝ 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը

հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղը զբաղեցրած մասնակցին:

ՀՀ կառավարության 06.04.2017թ. N 386-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման» կարգի 16-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է, որ, բացառությամբ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված ընթացակարգով գնումների կատարման դեպքի, գնահատող հանձնաժողովի քարտուղարը՝ առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու օրվանից հաշված մեկ աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցի էլեկտրոնային փոստին ուղարկում է ծանուցում՝ որակավորումը հավաստող փաստաթղթերը ներկայացնելու մասին:

Հրավերի 8.13 կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկում է ծանուցում, առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ նույն հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերն ու առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը: Նույն ենթակետով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ կիրառելով նույն հրավերի 1-ին մասի 8.13-ից 8.21-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ Հանձնաժողովի կողմից Ա/Ձ-ի էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկված՝ որակավորման չափանիշների համապատասխանությունը

հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու ծանուցման վերնագրում որևէ կերպ չի արտացոլվել նման պահանջ պարունակող փաստաթուղթ հանդիսանալու փաստը:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ վերը նշված ծանուցմանը կցված էլեկտրոնային փաստաթուղթը բացվում է «խնդրում ենք չպատասխանել այս նամակին» նշմամբ:

Խորհուրդը գտնում է, որ թեև նշված ծանուցումը գնտվել է Ա/Ձ-ի էլեկտրոնային փոստի «սպամ» թղթապանակում, այնուամենայնիվ նման պայմաններում Գոռ Աբրահամյան Ա/Ձ-ն հնարավորություն չէր ունենա info@armeps.am էլեկտրոնային հասցեից ստացված բազմաթիվ ծանուցումների թվից տարբերել Հանձնաժողովի՝ որակավորման չափանիշների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու ծանուցումը:

Խորհուրդը գտնում է նաև, որ «խնդրում ենք չպատասխանել այս նամակին» գրառումը նույնպես կարող էր նման թյուրիմացության պատճառ դառնալ, քանի որ նշված ծանուցման ստացումն ինքնին ենթադրում է մասնակցի կողմից սահմանված ժամկետում պատասխանի տրամադրում՝ հրավերով նախատեսված որակավորումը հիմնավորող փաստթղթերի ձևով:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Ա/Ձ Գոռ Աբրահամյանի 13.02.2018թ. ներկայացրած բողոքը բավարարել:

Չեղյալ համարել ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/7 ծածկագրով՝ 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ չափաբաժինների մասով ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին Հանձնաժողովի ընդունած որոշումը:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ